

Տվյալների հավաքագրման նախաձեռնություն 2007

Հետազոտության համառոտ նկարագրությունը

Տվյալների հավաքագրման նախաձեռնությունը (ՏՀՆ) Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) նախաձեռնած տարածաշրջանային ծրագրերից է, որի նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ համադրելի ու վստահարժան տվյալների հավաքագրումն է: 2004թ. ի վեր գործող այս ծրագրում ՀՌԿԿ անձնակազմից զատ ներգրավված են նաև բազմաթիվ փորձագետներ Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից: Եթե 2004թ. հարցումն անցկացվել է միայն հարավկովկասյան երկրների մայրաքաղաքներում, ապա 2005թ. ամեն երկրում ավելացվել են մեկական տարածաշրջան, իսկ 2006-2007թթ. հետազոտությունները ներկայացրել են ինչպես մայրաքաղաքները, այնպես էլ մյուս քաղաքային և գյուղական բնակավայրերը¹:

Հարցման գործիքը

Հարցման գործիքը՝ հարցաթերթը, մշակվել է երեք երկրների փորձագետներից կազմված աշխատանքային խմբերի կողմից և տարեց-տարի վերանայվել: Քանի որ հարցմամբ հավաքագրված տեղեկատվությունը վերաբերում է թե՛ տնային տնտեսություններին (դրանց ժողովրդագրական պատկերը, տնտեսական կարգավիճակն ու պայմանները, միգրացիոն շարժը), և թե՛ այդ տնտեսություններում ընտրված անհատներին (նրանց զբաղվածությունը, կրթությունը, առողջությունը, քաղաքական հայացքները ևն), 2007թ. հարցաթերթը տրոհվել է երկու՝ անհատական և տնային տնտեսության մասերի: Այն զգալի փոփոխության է ենթարկվել նաև նոր հարցերի ավելացմամբ և անարդյունավետ հարցերի բացառմամբ: 2007թ. հարցաթերթի յուրաքանչյուր մասի լրացման միջին տևողությունը կազմել է մոտ 30 րոպե:

Հարցման մեթոդաբանությունը

Բոլոր երեք հանրապետություններում հարցումն անցկացվել է միասնական ընտրանքային մեթոդաբանությամբ՝ նախնական ստրատիֆիկացմամբ բազմաստիճան քլաստերային ընտրանքով: Վրաստանում և Ադրբեջանում որպես ընտրանքի հիմք են ընդունվել վերջին մարդահամարի հասցեացանկերը, մինչդեռ Հայաստանում հարցված տնային տնտեսությունների ընտրանքի համար օգտագործել է էլեկտրացանցերի բաժանորդների ցանկը²: Հարավկովկասյան հանրապետություններում տարբեր աշխարհագրական շրջանների համեմատությունը հնարավոր դարձնելու համար յուրաքանչյուր երկրում նախնական ստրատիֆիկացմամբ առանձնացվել են հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավարևելյան, հարավարևմտյան ստրատաները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին տրոհվել է քաղաքային ու գյուղական վայրերի, իսկ մայրաքաղաքը դիտարկվել է որպես առանձին ստրատա: Այնուհետև, 9 ստրատաներից յուրաքանչյուրում կազմավորվել են շուրջ 500 տնային տնտեսություններից բաղկացած քլաստերներ: Վերջիններիս պատահական ընտրությունն իրականացվել է հաշվի առնելով ընտրանքի չափն ու տվյալ ստրատայի մեծությունը: Ընտրանքի մյուս փուլում յուրաքանչյուր ընտրված քլաստերում հարցման համար պատահականորեն ընտրվել է 50 տնային տնտեսություն: Տնային տնտեսության մասին տեղեկությունների համար հարցվել են տվյալ տնտեսությունում առավել տեղեկացված մեկ կամ երկու չափահաս անդամներ, իսկ անհատական հարցազրույցի համար չափահաս անդամներից ընտրության հիմք է ընդունվել վերջին ծննդյան օրվա մեթոդը: Հաշվի առնելով ընտրանքի դիզայն էֆֆեկտը և մերժումների ակնկալվող մակարդակը, Հայաստանում ընտրվել է 3250 տնային տնտեսություն, մինչդեռ լիարժեք հարցումներ իրականացվել են մոտ 2500-ում:

Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքային մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, հավաքագրված տվյալների բազան (SPSS ֆորմատով) և որոշ նախնական արդյունքներ տեղակայված են ՀՌԿԿ տարածաշրջանային վեբկայքում՝ www.crrccenters.org հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՌԿԿ-Հայաստան՝ crrc@crrc.am էլ. հասցեով:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունները խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների գործակցությամբ հիմնված ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմեք.

ՀՌԿԿ-Հայաստան, Երևան 0025, Աբովյան փող., 52, 3-րդ. հարկ: Հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50; crrc@crrc.am; www.crrc.am

Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին տեղեկությունների համար այցելեք www.crrccenters.org:

¹ Հարցում չի անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Օսեթիայում:
² Հայաստանի էլեկտրացանցերի կողմից տրամադրված ընտրանքային բազան ընդգրկում է 2007թ. ապրիլի դրությամբ վերոնշյալ ցանցի բաժանորդ բոլոր տնային տնտեսությունները: